ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍԱՔՈՒՆՑԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

5-Ա

ք. Երևան 09 ապրիլ 2013թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով. Է. Բաբայան (նախագահ), Ա. Շուշյան (նախագահի տեղակալ), Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 44-րդ հոդվածի, քննարկեց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանի կողմից էթիկայի կանոնների խախտման և նրան կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ:

Դիմումում մասնավորապես նշված է, որ 2013թ. փետրվարի 21-ին «Հետք օնլայն» էլեկտրոնային կայքէջում հրապարակվել է «Դա մեր առաջնորդի պարտությունը չէր, դա մեր ժողովրդի անգիտակից լինելն էր. Վանաձորի քաղաքապետ» վերնագրով հոդված, ըստ որի «Վանաձորի քաղաքապետ ՀՀԿ-ական Սամվել Դարբինյանը, պարզաբանելով հանրապետության երրորդ քաղաքում ՀՀԿ առաջնորդ Սերժ Սարգսյանի պարտությունը, նշել է. «Դա մեր առաջնորդի պարտությունը չէր, դա մեր ժողովրդի անգիտակից լինելն էր, որ

ժողովուրդը ինքը չի հասկանում՝ ինչ է անում»: Ըստ Դիմողի՝ հոդվածագրի հարցին, թե միգուցե ՀՀԿ տեղական կառույցներն են բացթողումներ ունեցել նախընտրական քարոզչության ընթացքում և քվեարկության օրը, Վանաձոր համայնքի ղեկավարը պատասխանել է. «Չէ, ամեն ինչ նորմալ է եղել, պարզապես ժողովուրդը չի հասկանում, էլի, ինքն ինչ պիտի անի, որ ավելի լավ կյանքում հայտնվի: Անընդհատ ուզում է 0-ից սկսի, անընդհատ 0-ից սկսելով՝ միշտ գալիս է հասնում է մինչև +1»:

Դիմողը գտնում է, որ. «...Վանաձորի քաղաքապետը իր «Հետք օնլայն» էլեկտրոնային կայք էջում տրված հարցազրույցով այն համայնքի բնակիչներին, որոնք իրեն ընտրել են որպես համայնքի ղեկավար, իրենց ընտրությամբ լիազորել են համայնքի բնակիչների անունից հանդես գալու և իրենց շահերը ներկայացնելու պարտականությամբ անվանում է «անգիտակից» և նշում է, որ «...ժողովուրդը չի հասկանում, էլի, ինքն ինչ պիտի անի, որ ավելի լավ կյանքում հայտնվի»:

Դիմողի կարծիքով՝ համայնքի ղեկավարի կողմից նման արտահայտություններ օգտագործելը խախտում է դիմումում վկայակոչված իրավական նորմերի դրույթները, ինչպես նաև վիրավորում է այն ժողովրդի արժանապատվությունը, որն իրեն ընտրել է որպես ղեկավար և օժտել մի շարք լիազորություններով: Դիմողը նաև պնդում է, որ համայնքի ղեկավարը իր գործողություններով չի հարգել հանրության բարոյական նորմերը, դրսևորել է իր պաշտոնին ոչ վայել վարքագիծ և անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել համայնքի բնակիչների նկատմամբ:

Դիմողը պահանջում է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանին ենթարկել կարգապահական տույժի:

Հիմք ընդունելով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի դիմումը և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Սաքունցի դիմումի հիման վրա հարուցել վարույթ:

2. Առաջարկել ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանին, սույն որոշումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ իր առարկությունները և բացատրությունները:

Հանձնաժողովի նախագահ *Է. ԲԱԲԱՅԱՆ*